ԲԱԳՐԱՏՈՒՆՅԱՑ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՆԱՎՈՐՄԱՆ ԹՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՋ

ԳՐԻԳՈՐՅԱՆ Մ. Գ.

Բագրատունյաց թագավորության պատմության լուսաբանման համար ցայսօր կարևոր նշանակություն ունի Հայոց պետականության վերականգնման և Աշոտ Ա Բագրատունու կառավարման թվագրության ուսումնասիրությունը:

Հայկական աղբյուրներում այս կապակցությամբ ուշագրավ են հատկապես Հովհաննես Դրասխանակերտցու, Թովմա Արծրունու, Ստեփանոս Տարոնեցու, Սամվել Անեցու, Կիրակոս Գանձակեցու, Վարդան վարդապետի աշխատություններում պահպանված վկայությունները: Հարցի ուսումնասիրության համար առանցքային նշանակություն ունի Հովհաննես Դրասխանակերտցու վկայությունը. «… քաջատոհմիկ պերճութիւն իշխանացն և նախարարացն Հայոց՝ խորհուրդ միաբանական առեալ՝ թագաւորեցուցանել զնա (Աշոտ Բագրատունուն – Գ. Մ.) ՝ի վերայ ինքեանց, զեկուցանեն ամիրապետին ՝ի ձեռն ոստիկանի Յիսէի՝ որդւոյ Շեխայ: Զոր և սիրալիր սրտիւ զարժանահայց խնդիրն ընկալեալ՝ առաքէ ապա Աշոտոյ թագաւորականս, և պարգևս և պատիւս, և երիվարս օդապարիկս զինուք և զարդուք մատուցանէին առաջի նորա: Կոչեցաւ ապա և անդ մեծ հայրապետն Գէորգ և զհոգևոր օրհնութեանցն զովութիւնս աստուածային ՝ի վերայ կատարեալ փոխանակ օծման սրուակի իւղոյն՝ պսակեն զնա թագաւոր ՝ի վերայ Ասքանազեան ազգին»[1]:

Համաձայն Թովմա Արծրունու, Աշոտ Բագրատունին «…քաջավայելչագոյնս զթագաւորութեանն կատարելագործեալ զժամանակն, Ե ամ յիշխանական ճոխութեան, ԻԵ ամ յիշխանաց իշխանական պետութեանն, Դ ամ ի թագակապ շքեղութեանն. և մեռավ ՅԼԹ թուականութեանն Հայոց, և ի ԺԵ ամի հայրապետութեանն Գէորգեայ Հայոց կաթողիկոսի»[2]:

Աշոտ Բագրատունու կառավարչության վերաբերյալ Ստեփանոս Տարոնեցին հաղորդում է. «…ՅԺԱ թուականին Հայոց նստաւ ամիր- ալ-մումունին Ահմատ. և տայ զերկիրս Հայոց Ալեայ, որդւոյ Յահէի: Սա կացուցանէ իշխանաց իշխան զԱշոտ որդի Սմբատայ, որ եկաց իշխանաց իշխան ամս ԻԲ մինչև ՅԼԶ թուականն, և ապա թագաւորեաց»[3]:

---

[1] **Յովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտցւոյ** *Պատմութիւն Հայոց (այսուհետև՝ Հովհաննես Դրասխանակերտցի), Թիֆլիս, 1912, էջ 138-139:*

[2] **Թովմա Արծրունի եւ Անանուն,** *Պատմութիւն տանն Արծրունեաց (այսուհետև՝ Թովմա Արծրունի և Անանուն), քննական բնագիրը, առաջաբանը և ծանոթագրությունները Մ. Հ. Դարբինյան-Մելիքյանի, Ե., 2006, էջ 254:*

[3] **Ստեփանոսի Տարօնեցւոյ Ասողկան** *Պատմութիւն տիեզերական, Ս. Պետերբուրգ, 1885, էջ 110:*

Սամվել Անեցու համոզմամբ, «Ի բառնալոյ Արշակունեաց թագաւորութեանցն մինչեւ թագաւորացն ցթագաւորութիւնս Բագրատունեաց լինին ամք ՆԼԴ: Աշոտ իշխանաց իշխան թագաւորեաց Հայոց ամս Ե»[4]:

«Արդ ի բառնալոյ թագաւորութեան Արշակունեաց մինչև ցթագաւորութիւնն Բագրատունեաց լինին ամք չորս հարիւր երեսուն և չորս: Ի ՅԼԴ թուականին հայոց թագաւորեաց Աշոտ, ... երեսուն երկու ամ իշխանաց իշխան կացեալ, և հինգ ամ թագաւորեալ Հայոց...»[5],- հիշատակում է Կիրակոս Գանձակեցին:

Ըստ Վարդան վարդապետի հիշատակությունների, «...օրհնէ զըթագն (Աշոտ Բագրատունու – Գ. Մ.) տէր Գէորգ յերեքհարիւր երեսուն և վեց թուին, եւ յերկոտասաներորդ ամի հայրապետութեան իւրում և յութհարիւր ութսուն և ութ ամի ծննդեան Տեառն: Որ բարիոք կարգաւորեաց զյօրինուածս թագաւորութեանն ամս հինգ»[6]:

Վերոհիշյալ հայկական աղբյուրների քննության շնորհիվ Ն. Ադոնցը հանգել է այն եզրակացության, որ ուշադրության են արժանի միայն Հովհաննես Դրասխանակերտցու և Թովմա Արծրունու վկայությունները, քանզի Սամվել Անեցու և Վարդան վարդապետի աղբյուրը եղել է Ստեփանոս Տարոնեցին, իսկ Կիրակոս Գանձակեցին օգտվել է Սամվել Անեցուց: Պատմաբանի հավաստմամբ, վերոհիշյալ վկայությունները, ինչպես և նրանց աղբյուրներ Ստեփանոս Տարոնեցու և Սամվել Անեցու հիշատակությունները արժեք չունեն[7]:

Իրապատում է Ն. Ադոնցի այն պնդումը, որ խնդրի քննությունը պետք է կապել Հովհաննես Դրասխանակերտցու և Թովմա Արծրունու վկայությունների ուսումնասիրությանը: Սակայն, ինչպես ստորև կհամոզվենք, Թովմա Արծրունու հիշատակությունը ևս անհամարժեքություն է պարունակում: Եթե անդրադառնանք հիշատակության վերջին հատվածին և Աշոտի մահը թվագրենք 890 թվականով, ապա ակնհայտ է, որ հիշատակության հաջորդ մասը, որը վերաբերում է Աշոտի՝ Գեորգ Գառնեցի կաթողիկոսի աթոռակալման 15-րդ տարում մահանալուն՝ հավաստի լինել չի կարող: Հայոց կաթողիկոսի աթոռակալման սկիզբը համարվում է 873 թ.[8], այսինքն՝ 15-րդ տարին կլինի 888 թ.: Հետևապես պատմիչի՝ Աշոտի՝ 5 տարի իշխանական ճոխությամբ, 25 տարի իշխանաց իշխան և 4 տարի թագավոր լինելը և 890 թ. մահանալն առաջացնում են անհամարժեքություն: Կարծում ենք, որ հայկական

---

[4] **Սամուէլ Անեցի,** *Հաւաքմունք ի գրոց պատմագրաց յաղագս գիւտի ժամանակաց անցելոց մինչեւ ի ներկայս ծայրաքաղ արարեալ: Բնագիրը կազմեց Ա. Հայրապետեանը, Ե., 2011, էջ 115:*

[5] **Կիրակոս Գանձակեցի**, *Պատմություն հայոց, աշխատասիրությամբ Կ. Ա. Մելիք-Օհանջանյանի, Ե., 1961, էջ 80-81:*

[6] *Հաւաքումն պատմութեան Վարդանայ վարդապետի, լուսաբանեալ աշխատութեամբ Ղ. Ալիշանի, Ի Վենետիկ, 1862, էջ 85-86:*

[7] **Ադոնց Ն.,** *Երկեր, հ. Ա, Ե., 2006 էջ 474:*

[8] *Նույն տեղում, էջ 474-475:*

աղբյուրներից միայն Թովմա Արծրունու մոտ պահպանված այս հիշատակությունը, որից օգտվել են մյուս հայկական աղբյուրները, հավաստի չէ:

Աշոտ Բագրատունու թագավորության վերաբերյալ ուշադրության են արժանի նաև վիմագիր արձանագրություններում պահպանվող վկայությունները, մասնավորապես Սևանի 874 թ., ինչպես նաև Գառնիի 879 թ. արձանագրությունները: Եթե առաջինի մեջ Աշոտը հիշատակված է իբրև թագավոր[9], ապա Գառնիի արձանագրության մեջ նրա կինը՝ Կատրանիդեն՝ «Հայոց թագուհի»[10]: Սակայն այս վկայությունները ևս արժանահավատ չեն, քանզի դրանցից առաջինի ընթերցման արդյունքները տարբեր են: Եթե Կ. Ղաֆադարյանի ընթերցմամբ, Աշոտ Բագրատունին թագավոր է հիշատակվում, ապա ըստ Լ. Մելիքսեթ – Բեկի՝ Աշոտը հիշատակվում է առանց «թագավոր» եզրույթի: Ստեփանոս Օրբելյանի «Պատմության» մեջ ևս հիշատակվում է այս արձանագրությունը, որտեղ Աշոտ Բագրատունին թագավորի փոխարեն կոչվում է «իշխանաց իշխան»[11]: Ըստ Վ. Հակոբյանի՝ Գառնիի 879 թ. արձանագրության մեջ Կատրանիդեի՝ «Հայոց թագուհի» տիտղոսով հիշատակվելը արժանահավատ չէ[12]: Կարծում ենք՝ Աշոտ Բագրատունին իշխանների մեջ ունեցած գահերեցության իրավունքով կարող էր կոչվել Հայոց թագավոր: Նույն սկզբունքը կարող էր գործել նաև նրա կնոջ՝ Կատրանիդեի պարագայում: Առհասարակ հայերենում «թագավոր» բառը, բացի «պետության միանձնյա ղեկավար, արքա, միապետ, ինքնակալ» նշանակություններից, ունի նաև «շրջապատի վրա իշխող, այս կամ այն հատկությամբ բոլորին գերազանցող» իմաստները[13]: Բնականաբար, Հայոց իշխանաց իշխանը և նրա կինը, օժտված լինելով վերոհիշյալ բոլոր հատկանիշներով, կարող էին կոչվել համապատասխանաբար՝ «Հայոց թագավոր» և «Հայոց թագուհի» եզրույթներով: Սակայն այս հանգամանքը ամենևին չի ստիպում ենթադրել, որ նրանց թագավորությունը 870-ական թթ. ճանաչվել էր օտար պետությունների կողմից:

Ստորև առավել մանրամասն կանդրադառնանք Աշոտ Բագրատունու թագավորելու թվականի վերաբերյալ Գրիգոր Մաշկևորի հիշատակարանում պահպանված՝ «Գրեցաւ ի սկիզբն թագաւորութեան Բագ[ր]ատունեաց Աշոտոյ, ձեռամբ անարժան Գրիգոր Մաշկեորի, ի ժամանակս հայրապետութեան Գէորգա կաթողիկոսին, որ օծեաց զԱշոտ թագաւոր Հայոց, ի թվ[ին] մերում ՉՃԼԳ (884) և քաղոց ամսոյ Ժ (10), ի անուն սրբոյն Սքանչելագործին վանիցն»[14] վկայության քննությանը:

---

[9] **Ղաֆադարյան Կ.,** *Հայկական գրի սկզբնատեսակները, Ե., 1939, էջ 88:*

[10] **Аракелян Б.** *Гарни, I, Е., 1951, с. 84.*

[11] *Մանր ժամանակագրություններ, XIII-XVIIIդդ., հ. II, կազմեց Հակոբյան Վ., Ե., 1956, էջ 161:*

[12] *Նույն տեղում:*

[13] *Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, հ. II, կազմեց Առաքելյան Վ., Ե., 1972, էջ 119:*

[14] *Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, Ե-ԺԲ դարեր (այսուհետև՝ Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ), աշխատասիրությամբ Ա. Մաթևոսյանի, Ե., 1988, էջ 39:*

Հայկական աղբյուրներում պահպանված վկայությունները հայագետներին թույլ են տվել Աշոտ Բագրատունու՝ թագավոր հռչակվելու վերաբերյալ ներկայացնել տարբեր տեսակետներ:

Մ. Չամչյանի, Հ. Դաղբաշյանի, Հ. Հարությունյանի, Թ. Հակոբյանի[15] և մի շարք այլ հեղինակների կարծիքով, Աշոտ Ա-ն թագադրվել է 885 թ.: Մ. Օրմանյանը, առաջարկելով 885 թ. կամ 886 թ., ի վերջո նախապատվությունը տալիս է ընդունված տարբերակին՝ 885 թ.[16], Հ. Մանանդյանը՝ 885 կամ 886 թթ.[17], Ն. Ադոնցը Աշոտ Ա-ի թագադրության թվականն է համարում աղբյուրներում հիշատակված Հայոց 334 թ., այն է՝ 885-886 թթ.[18], Ռ. Գրուսեն՝ 885 թ. ապրիլից մինչև 886 թ. ապրիլ[19], Կ. Յուզբաշյանը՝ 886 թ.,[20] Բ. Առաքելյանը՝ 884-885 թթ.[21], Ա. Տեր-Ղևոնդյանը՝ մոտավորապես 869-ով[22]: Պատմագիտության մեջ Աշոտ Բագրատունու՝ թագավոր հռչակվելու և Հայոց պետականության վերականգնման վերաբերյալ լիովին այլ տեսակետ է առաջ քաշում, Ռ. Մաթևոսյանը: Նրա կարծիքով, Աշոտ Բագրատունին նախ Շիրակավանի եկեղեցական ժողովում է հայ նախարարների և հոգևորականների կողմից թագավոր ճանաչվել, իսկ 885 թ. նրա թագավորությունը ճանաչել են օտար պետությունները[23]:

Խնդրին հանգամանորեն անդրադարձած Վ. Հակոբյանը փաստերի համադիր քննությամբ ցույց է տալիս, որ Աշոտի թագադրությունը տեղի է ունեցել 884 թ. օգոստոսի 26-ին[24]: Թեպետ հավանական է համարում նաև 885 թ.[25]: Վ. Հակոբյանի՝ Աշոտ Բագրատունու գահակալությունը 884 թ. օգոստոսի 26–ով թվագրման հետ համերաշխում են Հ. Բարթիկյանը[26] և Գ. Գրիգորյանը: Վերջինս, ինչպես նաև Բ. Առաքելյանի այն տեսակետին է, որ հայոց իշխանները դեռևս 869 թ. Աշոտին ճանաչել էին Հայոց թագավոր[27]:

---

[15] **Չամչյան Մ.,** *Պատմություն հայոց, Ե.,1984, հ., Բ, էջ 703,* **Daghbaschean H.** *Gründung des Bagratidenreiches durch Aschot Bagratuni, Berlin, 1893, ծնթ., 2, էջ 71-72,* **Հարությունյան Հ.,** *Հայաստանը IX-XI դարերում, Ե., 1959, էջ 29,* **Հակոբյան Թ.,** *Ուրվագծեր Հայաստանի պատմական աշխարհագրության, Ե., 1960, էջ 132:*

[16] **Օրմանեան Մ.,** *Ազգապատում, Հայ Ուղղափառ եկեղեցւոյ անցքերը սկիզբէն մինչեւ մեր օրերը յարակից ազգային պարագաներով պատմուած, հ. Ա, Ս. Էջմիածին, 2001, սյունակ 1157:*

[17] **Մանանդյան Հ.,** *Երկեր, հ., Բ, Ե., 1978, էջ 570:*

[18] **Ադոնց Ն.,** *նշվ. աշխ., հ. Ա., էջ 472:*

[19] **Grousset R.** *Histoire de l'Arménie des origines à 1071, Paris, 1947, p. 394.*

[20] **Юзбашян К.** *Армянские государства эпохи Багратидов и Византия IX- XI вв., М., 1988, с. 105.*

[21] **Առաքելյան Բ.,** *Քաղաքները և արհեստները Հայաստանում IX-XIII դդ., հ. 1, էջ 40, տե՛ս նաև Հայ ժողովրդի պատմություն, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., Ե., 1976, հ. III, էջ 23:*

[22] **Тер-Гевондян А.** *Армения и Арабский халифат, Е., 1977, с. 235.*

[23] **Մաթևոսյան Ռ.,** *Բագրատունյաց Հայաստանի պետական կառուցվածքն ու վարչական կարգը, Ե., 1990, էջ 96-97:*

[24] **Հակոբյան Վ.,** *նշվ. աշխ., էջ 162:*

[25] *Նույն տեղում, էջ 157:*

[26] **Բարթիկյան Հ.,** *Բյուզանդիան և հայ պետականությունը X-XI դդ. (Հայ- բյուզանդական հետազոտություններ, հ., Ա, Ե., 2002, ծնթ., 1, էջ 655):*

[27] **Գրիգորյան Գ.,** *Տարոնի Բագրատունիների ֆեոդալական իշխանությունը IX-X դարերում, Ե., 1983, էջ 116:*

Վերը նշյալներից տարբեր թվական են առաջարկում Մ. Ղազարյանը, Յո. Մարկվարտը և Կ. Մլակերը, որոնք Աշոտի գահակալությունը թվագրում են 887-ով[28]: Այս տեսակետը պաշտպանություն է գտնում նաև Լեոյի կողմից[29]: Վերոհիշյալ թվագրման հիմքը Ստեփանոս Տարոնեցու՝ վերը ներկայացված վկայությունն է, որում Հայոց ՅԼԶ թվականը համապատասխանում է 887 թ.: Սակայն, ինչպես իրավամբ փաստում է Վ. Հակոբյանը, Աշոտ Բագրատունու գահակալության վերաբերյալ Ստեփանոս Տարոնեցու հիշատակությունը հավաստի լինել չի կարող, քանզի, ըստ նրա՝ պատմիչը հակասում է իրեն: Վերջինիս հաղորդմամբ, Հայոց պետականության նորոգումը Աշոտ Ա-ի ձեռքով եղել է «յաւուրս Վասլի Յունաց թագաւորի և կամակցութեամբ նորին ՅԼԶ (887) մերոյ … ամք ՊՀԸ (888) …»: «Եթե իրոք Բասիլիոս Ի-ի (Վասիլ Ի-ի) ժամանակ և կամակցությամբ է Աշոտ Ա-ն թագավոր հռչակվել, ապա այդ պիտի լիներ մինչև 886 թ., նշանակում է՝ Ասողիկի տված ՅԼԶ (887) թվականը սխալ է, իսկ եթե հավաստի է հայոց ՅԼԶ թվականը, նշանակում է՝ Աշոտ Ա-ի թագավոր հռչակումը տեղի է ունեցել Բասիլիոս Ի-ի մահից՝ 886 թ. հետո, հետևապես, Ասողիկի վկայության առաջին մասը ստույգ չէ»[30]: Թեև Յո. Մարկվարտը և Կ. Մլակերը այլ փաստարկներ են մատնանշում 887 թվականը հաստատելու համար: Խոսքը վերաբերում է Թովմա Արծրունու կողմից, առաջին անգամ Վասպուրականի Գրիգոր-Դերենիկի մահվանից հետո Աշոտին «թագավոր» տիտղոսով հիշատակելուն: Պատմիչի թողած վկայություններում հանդիպում ենք ինչպես Գրիգոր-Դերենիկի մահվան ժամանակ նրա որդիների տարիքի, այնպես էլ ծննդյան վերաբերյալ հիշատակությունների: Համաձայն դրանց, Գրիգոր-Դերենիկի մահվան ժամանակ նրա որդիներից Աշոտը՝ 9, Գագիկը՝ 7, Գուրգենը՝ 5 տարեկան էին[31]: Թ. Արծրունին Գրիգոր-Դերենիկի որդիներից Գագիկի ծննդյան վերաբերյալ դնում է Հայոց ՅԻԸ (879) թվականը[32], իսկ Աշոտի ծննդյան վերաբերյալ պատմիչը փաստում է երկու տարբեր թվականներ՝ Հայոց ՅԻԶ թ.[33] (877), մեկ այլ տեղում՝ Հայոց ՅԻԵ թ. (876)[34]:

Յո. Մարկվարտի և Կ. Մլակերի կատարած հաշվումներով, Վասպուրականի իշխանի մահը թվագրվում է 887-ով, ինչն էլ նրանց թույլ է տալիս պնդել, որ Աշոտի՝ թագավոր հռչակվելը տեղի է ունեցել հենց այդ թվականին: Սակայն Վ. Հակոբյանն իրապես փաստում է, որ Թովմա Արծրունու հիշատակություններում Վասպուրականի Գրիգոր-Դերենիկի մահվան և ավագ որդու՝ Աշոտ Արծրունու ծննդյան թվականի

---

[28] **Ghazarian M.** *Armenien unter der Arabischen Herrschaft bis zur Entsehung des Bagratidenreiches, Marburg, 1903, S. 54,* **Markwart J.** *Südarmenien und die Tigrisquellen nach griechischen und arabischen Geographen (Հանդէս ամսօրեայ, 1915, N 1-12, այունակ 131-132),* **Mlaker K.** *Zur chronologie Ašots I (Հանդէս ամսօրեայ, 1927, N 11-12, այունակ, 883):*

[29] **Լեո,** *Երկերի ժողովածու, հ., 2, Ե., 1967, էջ 504:*

[30] **Հակոբյան Վ.,** *նշվ աշխ., էջ 158:*

[31] **Թովմա Արծրունի և Անանուն,** *էջ 253:*

[32] *Նույն տեղում, էջ 242:*

[33] *Նույն տեղում:*

[34] *Նույն տեղում, էջ 274-275:*

վերաբերյալ պատմիչի հիշատակություններն իրարամերժ են, ուստի Գրիգոր-Դերենիկի մահվան թվականը ստույգ որոշել հնարավոր չէ[35]: Նշենք, որ Գրիգոր-Դերենիկի մահվան ժամանակ նրա որդու՝ Աշոտ Արծրունու տարիքի վերաբերյալ Անանուն պատմիչի հիշատակությունները չեն համերաշխում Թովմա Արծրունու վկայություններին: Վերջինիս հավաստմամբ, Վասպուրականի իշխանի մահվան ժամանակ նրա ավագ որդին՝ Աշոտ Արծրունին, 9 տարեկան էր, մինչդեռ Անանուն պատմիչը հիշատակում է Աշոտի՝ մոտավորապես 12 տարեկան լինելը[36]: Այս իրողությունը ևս փաստում է, որ հնարավոր չէ Գրիգոր-Դերենիկի մահվան ժամանակ նրա որդիների տարիքի և նրանց ծննդյան վերաբերյալ հիշատակությունների միջոցով ճշգրիտ թվագրել Աշոտ Բագրատունու՝ թագավոր հռչակվելու թվականը: Բացի այդ, Գրիգոր-Դերենիկի մահվանից անմիջապես հետո Թովմա Արծրունու կողմից Աշոտ Բագրատունուն առաջին անգամ «թագավոր» տիտղոսով հիշատակելը չի ենթադրում, որ Հայոց թագավորի գահակալությունը պետք է թվագրել Գրիգոր-Դերենիկի մահվան թվականով:

Գուցե Աշոտ Բագրատունին դրանից մի քանի տարի առաջ խալիֆայության կողմից արդեն ճանաչվել էր իբրև Հայոց թագավոր: Ամենևին պարտադիր չէ Աշոտի՝ թագավոր դառնալը և Գրիգոր-Դերենիկի մահը նույն թվականով թվագրելը, միայն այն պատճառով, որ Թովմա Արծրունին Աշոտ Բագրատունուն առաջին անգամ թագավոր է հիշատակում Վասպուրականի իշխանի մահվանից հետո: Հատկապես, երբ Վ. Հակոբյանը ուղղակիորեն մատնանշում է. «…Թովմա Արծրունին վերոհիշյալ գլխում, երբ նկարագրում է Դերենիկի սպանությունը և նախորդող դեպքերը, Աշոտ Բագրատունուն երեք անգամ հիշում է իշխանաց իշխան, երեք անգամ՝ ուղղակի Աշոտ և երկու անգամ՝ թագավոր»[37]:

Հայոց պետականության վերականգնման վերաբերյալ քննության արժանի հաջորդ տեսակետը, ինչպես վերը նշեցինք, մի շարք գիտնականների՝ մասնավորապես Վ. Հակոբյանի առաջ քաշած՝ 884 թ օգոստոսի 26-ն է, չորեքշաբթի օրը: Հեղինակն իր տեսակետը հաստատելու համար վկայակոչում է Գրիգոր Մաշկևորի հիշատակարանը[38]: Չնայած Վ. Հակոբյանը թերահավատորեն է վերաբերվում 884 թ. օգոստոսի 26-ին Հայոց թագավորին օծելու հիշատակությանը՝ հենվելով այն հայտնի իրողության վրա, որ Հայոց եկեղեցին, ի թիվս այլ եկեղեցիների, չորեքշաբթին, որպես Քրիստոսի մատնության օր, սուգ հայտարարելով, արգելում է պատարագը: Հակոբյանը հավանական է համարում և ենթադրում, որ գուցե շաբաթվա օրե-րից

---

[35] **Հակոբյան Վ.,** *նշվ աշխ., էջ 159:*

[36] **Թովմա Արծրունի և Անանուն,** *էջ 296:*

[37] **Հակոբյան Վ.,** *նշվ. աշխ., էջ 158-159:*

[38] *Վ. Հակոբյանը այս կապակցությամբ գրում է՝ «Մեր որոնումների ժամանակ Մատենադարանի ձեռագիր ավետարաններից մեկում (N 3711), որը XIV դարի ընդօրինակություն է, մեզ հանդիպեց ձեռագրի հնագույն ընդօրինակության երեք հիշատակարան, ժամանակակցի կողմից գրված, որոնք նոր լույս են սփռում քննության ենթակա հարցի վրա»* (**Հակոբյան Վ.,** *նշվ. աշխ., էջ 156):*

չորեքշաբթիի հետ է կապված Հովհաննես Դրասխանակերտցու այն վկայությունը, ըստ որի, Աշոտ Բագրատունուն, «փոխանակ օծման սրուակի իւղոյն»[39], պսակել են միայն կաթողիկոսի օրհնությամբ: Չնայած դրան՝ նա մնում է իր համոզմանը՝ Հայոց պետականության վերականգնումը և Աշոտ Բագրատունու թագավորելը թվագրում 884 թ. օգոստոսի 26-ով: Սակայն չբացառելով նաև 884 թ.-ի՝ ընդմիջարկություն լինելը, նշում է, որ կարելի է այդ դարակազմիկ իրադարձության թվական համարել նաև 885 թ. օգոստոսի 26-ը: Այս պարագայում չորեքշաբթիի փոխարեն կլինի հինգշաբթի[40]: Սակայն գիտնականի ուշադրությունից վրիպել են երկու կարևոր հանգամանք: Հովհաննես Դրասխանակերտցին օծելու փոխարեն հիշատակում է «զհոգևոր օրհնութեանց գովութիւնս աստուածայինս կատարեալ», իսկ Գրիգոր Մաշկևորի հիշատակարանում ուղղակիորեն նշված է Աշոտին օծելու մասին. (Գեորգ կաթողի-կոսը), «…օծեաց զԱշոտ թագաւոր»: Ակնհայտ անհամաձայնություն է ստացվում հիշատակարանի և պատմիչի վկայություններում:

Բացի այդ, այս հիշատակարանների գրության թվականի վերաբերյալ Ն. Մառը ցուցաբերել է որոշ տատանումներ. «Այս հիշատակությունները գրված են հետագայում, հավանաբար 18-րդ կամ 19-րդ դարում և կապ չունեն 14-րդ դարում ընդօրինակված բուն ձեռագրի հետ: Ո՛չ գաղափար օրինակի, ո՛չ էլ ձեռագրի գրիչն է գրել այն…»[41]:

Ինչ վերաբերում է Վ. Հակոբյանի կողմից կաթողիկոսի պսակը հոգևոր օրհնությամբ չորեքշաբթիին առնչելուն, կարծում ենք՝ այնքան էլ համոզիչ չէ: Ամեն պարագայում կաթողիկոսի հոգևոր օրհնությունը ևս պետք է տեղի ունեցած լիներ եկեղեցական արարողությամբ, հետևապես, չորեքշաբթի լինել չէր կարող: Կարծում ենք՝ դեպքերի ժամանակակից Հովհաննես Դրասխանակերտցու կողմից Աշոտ Բագրատունուն մյուռոնով չօծելու պարագան բավարար հիմք է տալիս պնդելու, որ Մաշկևորի հիշատակարանի վկայությունը հավաստի չէ:

Աշոտ Բագրատունու՝ հայոց թագավոր հռչակվելու թվագրման վերաբերյալ միակ հավաստի աղբյուրը կարող է լինել դեպքերին առավել մոտ կանգնած հայոց կաթողիկոս Հովհաննես Դրասխանակերտցու հիշատակությունը. հայոց թագավորը խալիֆայությունից թագ էր ստացել «…՝ի ձեռն ոստիկանի Յիսէի՝ որդւոյ Շեխայ»:

Թեպետ Ն. Ադոնցը պատմիչի հիշատակությունը սրբագրում է՝ նշելով, որ թագաբերը ոչ թե Հիսեն է, այլ նրա որդին[42]: Այդուհանդերձ, Ա. Տեր-Ղևոնդյանի հավաստմամբ, վերջինս Իսա իբն ալ Շայխ ալ-Շայբանին է, որը Աշոտ Բագրատունուն

---

[39] **Հովհաննես Դրասխանակերտցի,** *էջ 139:*

[40] **Հակոբյան Վ.,** *նշվ. աշխ., էջ 157-158:*

[41] *Այս մասին առավել մանրամասն տե՛ս Մատենադարան, Անտիպ ձեռագրացուցակ, N 133, թղթ. Ա, էջ 5, տե՛ս նաև Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ծնթ., 1, էջ 39:*

[42] **Ադոնց Ն.,** *նշվ. աշխ., էջ 472:*

թագ և արքայական նշանակներ էր բերել[43]: Չնայած սրան՝ Հ. Նալբանդյանն այդ դերում տեսնում է Իսհակ իբն Կունդաջիկին[44] (Իսհակ իբն Քունդաջիկ – Գ. Մ.): Սակայն այս տեսակետը հավաստի չէ: Հովհաննես Դրասխանակերտցու հիշատակած Հիսեն համարժեք է արաբական Իսային, իսկ իբն մասնիկը ցույց է տալիս նրա՝ Շայխի որդի լինելը: Ինչպես վերը նշվեց, Հովհաննես Դրասխանակերտցին հենց նրան է մատնանշում իբրև Աշոտին թագ և արքայական իշխանությունը խորհրդանշող նշանակներ բերող: Ակնհայտ է, որ Իսհակը սերում է Քուն- դաջիկից և Շայխի հետ որևէ կապ ունենալ չէր կարող: «Շեխ» (Շայխ) եզրույթը կարելի է ընկալել իբրև «կառավարիչ, նահանգապետ», այսինքն՝ իբրև «պաշտոնյա իմաստով»: Սակայն Հովհաննես Դրասխանակերտցու աշխատությունում այն գրված է մեծատառ, հետևապես՝ անուն է, այլ ոչ թե պաշտոն:

Թեպետ Հ. Նալբանդյանն Աշոտ Բագրատունու թագաբերի դերում մատնանշում է Իսհակ իբն Քունդաջիկին, այդուհանդերձ, ակնհայտ է, որ այս հարցում ցուցաբերել է որոշ տատանումներ:

Նրա հավաստմամբ, հայկական աղբյուրներն Աշոտ Բագրատունու թագավորության վերաբերյալ հաղորդում են Հայոց ՅԼԴ թ., այսինքն՝ 886 կամ 887 թ.: Հակառակ սրան՝ արաբական աղբյուրները՝ «իբն Խալդունը, Հիջրի 268 թ. (մ. թ. 881-882)., Հիջրի 269 թ. (մ. թ. 882-883) իբն Էլ Աթիր (Է, էջ 159) և Հիջրի 270 թ. (մ. թ.883-884) Տաղրիբերդին (Գ 46)» Իսային համարում են մահացած[45]:

Եթե Հ. Նալբանդյանն իրապես համոզված լիներ, որ Հայոց թագավորի թագաբերն Իսհակ իբն Քունդաջիկն է, չէր մտահոգվի հայկական աղբյուրում Աշոտի թագադրման և արաբական աղբյուրներում Իսայի մահվան վերաբերյալ հանդիպող հակասական հիշատակություններով: Ակնհայտ է, որ նա Աշոտի թագադրությունը կապում է Իսայի հետ: Սակայն վերջինիս մահվան թվականի և Աշոտի գահակալության վերաբերյալ հայկական և արաբական աղբյուրների վկայություններն առաջացնում են անհամարժեքություն: Տրամաբանական է, որ, ըստ Հ. Նալբանդյանի վկայակոչած արաբական աղբյուրների հիշատակությունների, 881-884 թթ. մահացած կառավարիչը չէր կարող հետմահու թագադրել Աշոտ Բագրատունուն: Հեղինակն, ակնհայտ անհամաձայնությունների հանդիպելով արաբական և հայկական աղբյուրներում, այդպես էլ վերջնական լուծում չի տալիս հարցին[46]:

Հովհաննես Դրասխանակերտցին, ինչպես նշեցինք, Իսային հիշատակում է իբրև ոստիկան՝ կառավարիչ: Վերջինս, պաշտոնանկ արվելով Ասորիքի կառավարչի պաշտոնից, խալիֆայի կողմից նշանակվել էր Արմինիայի կառավարիչ: Առաջին

---

[43] **Տեր-Ղևոնդյան Ա.,** *Արմինիայի ոստիկանների ժամանակագրությունը, հոդվածների ժողովածու, Ե., 2003, էջ 128:*

[44] **Նալբանդյան Հ.,** *Արաբացի ոստիկանները Հայաստանում (ՀՍՍՌ ԳԱ Տեղեկագիր, հաս. գիտ., 1956, N 8, էջ 123-124):*

[45] *Նույն տեղում, էջ 124:*

[46] *Հ. Նալբանդյանին, վերահաս մահվան պատճառով, չհաջողվեց սույն հոդվածը ավարտին հասցնել:*

հայացքից կարելի Իսայի կառավարչության տարիներով ճշգրիտ թվագրել խնդրո առարկա իրողությունը: Սակայն հայկական աղբյուրներն Արմինիայի կառավարիչների պաշտոնավարության տարիների վերաբերյալ հստակ թվական վկայություններ չեն հաղորդում: Ինչ վերաբերում է արաբական աղբյուրներին, ապա դրանցում պահպանված հիշատակությունները հակասական են: Իսայի պարագայում Յակուբին նրա՝ Արմինիայի, Դիար Բաքրի և Ատրպատականի կառավարչությունը թվագրում է 870 կամ 871-ով: Առավել կոնկրետ, ըստ պատմիչի վկայությունների, ([Իսա իբն ալ-Շայխը] այդ երկրից (պատմիչը նկատի է ունեցել Հայաստանը) դուրս եկավ 257-ի Ջումադա Բ ամսին (26 ապրիլ-24 մայիս 871)…)[47], Թաբարին հիջրի 256 թ.[48], (869-870) Իբն ալ-Ասիրը՝ հիջրի 256 թ. (9 դեկտեմբեր 869-28 նոյեմբեր 870)[49], Աբուլ-Ֆիդան՝ 870 թ.[50]:

Չնայած սրան, Յո. Մարկվարտը հակված է Իսային այդ պաշտոնում տեսնել 870-875 թթ. միջակայքում[51]: Դա Վ. Վարդանյանին թույլ է տվել նրան վերագրել Աշոտ Բագրատունուն թագ և թագավորական իշխանություն խորհրդանշող նշանակներ բերելը. «Արմինիայի վերջին կառավարչի վտարումից հետո հայ իշխանները 883 կամ 884 թ. այդ խնդրանքով դիմել են հենց Հիսեին (Իսային), իբրև իրենց վաղածանոթ և խալիֆայի վստահությունը վայելող պաշտոնյայի»[52]: Այս ենթադրությունը գուցե մեզ թույլ տա կարծել, որ Վ. Վարդանյանը Հայոց թագավորության վերականգնումը թվագրում է այդ նույն թվականով:

Արաբական աղբյուրներում պահպանված վկայությունները մեզ թույլ են տալիս համերաշխել, Իսայի՝ Արմինիայի առաջին կառավարչության՝ 870-871 թթ. թվագրմանը[53]:

---

[47] **Յակուբի,** *Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, 16, Արաբական աղբյուրներ, Գ, Արաբ մատենագիրներ Թ-Ժ դարեր (այսուհետև՝ Յակուբի), ներածությունը և բնագրերից թարգմանությունները Ա. Տեր-Ղևոնդյանի, Ե., 2005, էջ 398-399:*

[48] تاريخ الطبري (تاريخ الرسل والملوك لابي جعفر محمد بن جرير الطبري 224-310) , الجزء التاسع, القاهرة 1975, ص. 475 .

[49] **Իբն ալ-Ասիր,** *Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, 11, Արաբական աղբյուրներ, Բ, թարգմանություն բնագրից. առաջաբան և ծանոթագրություններ Ա. Տեր-Ղևոնդյանի, Ե., 1981, էջ 164:*

[50] **Աբուլ-Ֆիդա,** *Արաբական աղբյուրները Հայաստանի և հարևան երկրների մասին կազմեց Հ. Նալբանդյանը, Ե., 1965, էջ 213, տե՛ս նաև ծնթ. 7, էջ 252:*

[51] **Marquart J.** *Eranšahr nach der Geographie des Ps. Moses Xorenac'i, Berlin, 1901, S. 109.*

[52] **Վարդանյան Վ.,** *Արծրունիները հայոց պատմության մեջ, Ե., 2002, էջ 92:*

[53] **Ֆասմեր Ռ.,** *Ժամանակագրութիւնն Հայաստանի ոստիկաններու առաջին Աբբասեանց օրով, Աս-Սաֆֆախէն մինչեւ Աշոտ Ա. ի թագաւորելը 750-887, թարգմանեց դկտ. Հ. Վահան Վ. Ինգլիզեան, Վիեննա, 1933, էջ 98,* **Նալբանդյան Հ.,** *նշվ. աշխ., էջ 123,* **Տեր-Ղևոնդյան Ա.,** *նշվ. աշխ., էջ 396,* Encyclopédie de L'Islam, nouvelle edition, (*այսուհետև՝* Encyclopédie de L'Islam), par E. Van Donzel, B Lewis et Ch. Pellat t. IV Leiden, E. J. Brill, Paris, 1978, p. 93.

Նրա պաշտոնավարության այս շրջանի տևողության վերաբերյալ Ռ. Ֆասմերը գրում է. «Որչափ ժամանակ այս Իսան Հայաստանի ոստիկան եղավ՝ չենք գիտեր»[54]:

Իսայից հետո արաբական աղբյուրը հիջրի 261 թ. (874-875 թթ.) Եգիպտոսի, Ասորիքի, Մոսուլի, Արմինիայի և Խորասանի կառավարչի պաշտոնում հիշատակում է Մուտամիդ (870-892 թթ.) խալիֆի որդուն՝ Ջաֆար ալ-Մուֆավվիդին[55]: Վերջինիս կառավարչության թվագրմանը համերաշխում են Ռ. Ֆասմերը, Հ. Նալբանդյանը և Ա. Տեր-Ղևոնդյանը[56]: Հայաստանի հաջորդ կառավարչը՝ Մուհամմադ իբն Խալիդն էր, նա այդ պաշտոնը երկրորդ անգամ զբաղեցրել է 878 թ.[57]: Արաբական աղբյուրը հիջրի 266-ին՝ (879-880 թթ.) Հայաստանի, Մոսուլի, Դիար Ռաբիայի կառավարչի պաշտոնում հիշատակում է Իսհակ իբն Քունդաջիկին[58]:

Իսայից հետո 871-874 թթ. ընկած ժամանակահատվածում հնարավոր չէ ստույգ որոշել Արմինիայի կառավարչին կամ կառավարիչներին: Այդ պաշտոնը վարել է 874-875 թթ. Ջաֆար ալ-Մուֆավվիդը, 878 թ.՝ Մուհամմադ իբն Խալիդը, իսկ 879-880 թթ.՝ Իսհակ իբն Քունդաջիկը: Չնայած սրան, առանձնակի ուշադրության է արժանի մասնագիտական գրականության մեջ հանդիպող «Իբրահիմ (881)-Հիշվում է դրամի վրա. Արմինիա 268 (881-882)»[59] կապակցությունը: Սակայն Ա. Տեր-Ղևոնդյանը իրավացիորեն զերծ է մնում վերջինիս որևէ պաշտոն վերագրելուց: Հայտնի իրողություն է, որ արաբական դրամների վրա կարող էր լինել խալիֆի, թագաժառանգի, տվյալ տարածաշրջանի կառավարչի կամ պարզապես ժամանակի ազդեցիկ որևէ պաշտոնյայի անուն: Ամենայն հավանականությամբ, այդպիսի հեղինակությամբ օժտված է եղել նաև Իբրահիմը: Վերջինս գուցե նույն վրացական աղբյուրում հիշատակված Աբրահամն էր, որը Իսային փոխարինել էր 870-878 թթ. միջակայքում[60]:*

Այսպիսով, Իսան 874-875, 878 և 879-880 թթ. Արմինիայի կառավարչի պաշտոնը չէր կարող զբաղեցնել: Սակայն հայտնի է, որ հիջրի 266-ին՝ (879-880 թթ.) նա դեռևս Ամիդում էր[61]՝, իսկ հիջրի 267 թ. (880-881 թթ.) Միջագետքում ծագած խռովությունների մեջ էր[62]: Ամենայն հավանականությամբ, հենց այս ժամանակ էլ Իսան վերստին դառնում է Արմինիայի կառավարիչ: Այստեղ հետաքրքրքրական է նաև այն

---

[54] **Ֆասմեր Ռ.,** *նշվ., աշխ., էջ 99:*

[55] **Իբն ալ-Ասիր,** *էջ 166:*

[56] **Ֆասմեր Ռ.,** *նշվ. աշխ., էջ 99-100,* **Նալբանդյան Հ.,** *նշվ. աշխ., էջ 123,* **Տեր-Ղևոնդյան Ա.,** *նշվ. աշխ., էջ 396:*

[57] **Նալբանդյան Հ.,** *նշվ. աշխ., էջ 123,* **Տեր-Ղևոնդյան Ա.,** *նշվ. աշխ., էջ 396:*

[58] الطبري , *նշվ. աշխ., էջ 553: Իսհակ իբն Քունդաջիկի կառավարչության վերաբերյալ տե՛ս նաև* **Ֆասմեր Ռ.,** *նշվ. աշխ., էջ 100,* **Նալբանդյան Հ.,** *նշվ. աշխ., էջ 123-124, հմմտ.* **Տեր-Ղևոնդյան Ա.,** *նշվ. աշխ., էջ 396:*

[59] **Տեր-Ղևոնդյան Ա.,** *նշվ. աշխ., էջ 396:*

[60] **Картлис Цховреба**. *История Грузии (ЗЫлбхС»п¨՝ Картлис Цховреба), под. ред. Метревели Р., Тбилиси, 2008, с. 142, прим., 64, с. 168.*

[61] **Իբն ալ-Ասիր,** *էջ 168:*

[62] *Նույն տեղում, էջ 169:*

հանգամանքը, որ Ռ. Ֆասմերը, վկայակոչելով արաբական աղբյուրը, նկատում է, որ Իսհակ իբն Քունդաջիկը հիջրի 269 թ. (882-883 թթ.) Արմինիայի, Մոսուլի, Դիար-Ռաբիայի կառավարչի փոխարեն կոչվում է Մոսուլի և Ջազիրայի կառավարիչ[63]: Պարզելու համար, թե ով է եղել Արմինիայի կառավարիչը 881-883 թթ., մեզ օգնում է Իբն ալ-Ասիրը: Ուշադրության է արժանի նրա այն վկայությունը, ըստ որի, Իսան մինչ իր մահը եղել է Արմինիայի կառավարիչ[64]: Ի դեպ, Ա. Տեր-Ղևոնդյանը, ևս Իսհակ իբն Քունդաջիկից հետո (թեպետ հեղինակը «Իբրահիմ (881)-Հիշվում է դրամի վրա. Արմինիա 268 (881-882)» կապակցությունը նշում է Իսհակ իբն Քունդաջիկից հետո, սակայն, ինչպես վերը նշեցինք, զերծ է մնում Իբրահիմին որևէ պաշտոն վերագրելուց) նշում է Իսային և նրան է վերագրում Աշոտ Բագրատունուն խալիֆայից թագ բերելը[65]:*

Փաստերի համադիր քննությունը մեզ թույլ է տալիս Աշոտ Բագրատունուն Իսա իբն ալ-Շայխի կողմից թագ բերելու թվագրումը պարզել Իսայի մահվան ճշգրտմամբ: Այս առնչությամբ Հ. Նալբանդյանը, ինչպես վերը նշեցինք, մատնանշում էր «իբն Խալդունը, Հիջրի 268 թ.(մ. թ. 881-882), Հիջրի 269 թ. (մ. թ. 882-883) Իբն Էլ Աթիր (էջ 159) և Հիջրի 270 թ. (մ. թ. 883-884) Տաղրիբերդին (Գ 46)» արաբական աղբյուրներում պահպանված վկայությունները: Եթե Իբն Խալդունի[66] և Իբն ալ-Ասիրի[67] պարագայում իրապատում են Հ. Նալբանդյանի վկայակոչումները, ապա Տաղրիբիրդիին արված հղումը չի փաստվում տվյալ աղբյուրով: Պատմիչի աշխատությունում կառավարչի մահը թվագրվում է հիջրի 269-ով[68] (882-883 թթ.):

Այսպիսով, արաբական աղբյուրներն Իսայի մահը թվագրում են հիջրի 268-269 թվականների (881-883 թթ.) միջակայքում[69]: Ուստի, տրամաբանական է կարծել, որ Իսայի կողմից Աշոտ Բագրատունուն թագ և արքայական իշխանությունը խորհրդանշող նշանակներ բերելը տեղի ունեցած պետք է լիներ մինչ նրա մահը:

Առանձնակի ուշադրության է արժանի նաև այն հանգամանքը, որ Աշոտ Բագրատունին 881 թ. Վիրքում տեղի ունեցած իրադարձությունների ժամանակ վրացական աղբյուրում հիշատակված է «թագավոր» եզրույթով[70]:

Այսպիսով, Աշոտ Բագրատունու թագադրման և հայոց պետականության վերականգնման վերաբերյալ հայկական աղբյուրներում պահպանված վկայություններից արժանահավատ են Հովհաննես Դրասխանակերտցու հիշատակությունները: Հայոց պետականության վերականգնումը, խալիֆայությունից Իսա իբն ալ-Շայխ ալ-Շայբանիի միջոցով, Աշոտ Բագրատունուն թագ բերելու և նրա՝

---

[63] *Տե՛ս* **Ֆասմեր Ռ.,** *նշվ. աշխ., էջ 100:*

[64] **Իբն ալ-Ասիր,** *էջ 169:*

[65] **Տեր-Ղևոնդյան Ա.,** *նշվ. աշխ., էջ 396:*

[66] عبد الرحمان بن خلدون, تاريخ ابن خلدون, الجزء الثالث, بيروت, 2000, ص. 429 .

[67] **Իբն ալ-Ասիր,** *նույն տեղում:*

[68] رة في ملوك مصر والقاهرة, الجزء الثالث, بيروت, 1992, ص. 58بن تغري بردي الأتابكي, النجوم الزاه .

[69] *Իսլամի հանրագիտարանում ևս Իսայի մահը թվագրված է հիջրի 269-ով (տե՛ս* Encyclopédie de L'Islam, *p. 94):*

[70] **Картлис Цховреба**, *с. 142.*

հայոց թագավոր հռչակվելը, ամենայն հավանականությամբ, տեղի է ունեցել 881-883 թթ. միջակայքում:

ДАТА ОСНОВАНИЯ ЦАРСТВА БАГРАТИДОВ

ГРИГОРЯН М. Г.

Резюме

Наиболее достоверным источником, содержащим данные о коронации Ашота Багратуни и восстановлении армянской государственности, является труд Ованнеса Драсханакертци.

Сопоставление армянских, грузинских и арабских источников приводит к заключению, что, по всей вероятности, армянская государственность была восстановлена в 881-883 гг.